ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 09 2015թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 71

Ձեռնարկողը՝ *<<Զորախաչ>> ՍՊԸ*
ք. Երևան, Մոլդովական 27/1

Գործունեությունը՝ ***Նոր Նորք վարչական շրջանում գործող մարզահամալիրի լողավազանի վերակառուցում, նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 71

<<18>> 09 2015թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գործող մարզահամալիրի լողավազանի վերակառուցում, նոր մասնաշենքերի կառուցում աշխատանքային նախագծերի նախնական գնահատման հայտի վերաբերյալ

Պատվիրատու՝	<<Զորախաչ>> ՍՊԸ
Նախագծողներ՝	<<Ֆուլ-Արտ>> ՍՊԸ, <<Էկո Աուդիտ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Զորախաչ>> ՍՊ ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի, Նորքի 2-րդ մ/շ, Մոլդովական փողոց 27/1 հասցեում գործող մարզահամալիրի վերակառուցում:

Նախագծի համար հիմք է հանդիսացել 02.04.2013թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրված N01/18-07/2-15472-256 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 18112014-01-0220 վկայականը և ՀՀ շինարարական նորմերը:

Նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներով հատկացված տարածքի սահմաններում: Հողատարածքի մակերեսը 1.48223 հա է:

Առաջին փուլում նախատեսվում է կառուցել սպորտային մասնաշենքը և սպորտային մասնաշենքը փակ լողավազանին միացնող միջանցիկ մասնաշենքը (/Ա/ մասնաշենք): Առաջին փուլում նախագծված շինությունը մասամբ կառուցված է, առկա են ճարտարապետահատակագծային փոփոխություններ, որոնք ներառված են նախագծում:

Երկրորդ փուլում նախատեսվում է կառուցել հյուրանոցային մասնաշենքը (/Բ/մասնաշենք), մինիֆուտբոլի փակ մասնաշենքը (/Գ/ մասնաշենք), սրճարանային մասնաշենքը (/Դ/ մասնաշենք), կաթսայատունը (/Ե/ մասնաշենք), ադմինիստրատիվ մասնաշենքը (/Զ/ մասնաշենք) և վերակառուցել հողատարածքի պարիսպները:

Մասնաշենք /Ա/-ի առավելագույն բարձրությունը հատակագծային նիշից 12.60մ է: Մասնաշենքը երկահարկանի է՝մասամբ նկուղով:

Կոնստրուկտիվ սխեման կարկասային է, տանիքը մեծաթռիչք ֆերմաներով, ծածկը լանջավոր, մասամբ հարթ՝ ջրահեռացումը կազմակերպված, երեսպատվելու է՝ բազալտե սալիկներով, այլումինե կոմպոզիտե սալիկներով, բարձրորակ սվաղով:

Ըստ ֆունկցիայի նկուղային, առաջին,երկրորդ հարկերը բաժանված են հետևյալ կերպ՝ նկուղային հարկում է գտնվելու բաց լողավազանի տեխնիկական սենյակը եվ սպա կենտրոնը:

Առաջին հարկում նախատեսվում է նախասրահ, սպորտային դահլիճ, տղամարդկանց և կանացի հանդերձարաններ, բժշկի և մարզիչների սենյակներ, տեղեկատու սենյակներ, սրճարան և բար, սպորտային սենյակ և օժանդակ սենյակներ:

Երկրորդ հարկում նախատեսված է նախասրահ, մանկական սենյակ, սպորտ-դահլիճ (ֆիտնես դահլիճ), տղամարդկանց և կանացի վարսավիրանոցներ օժանդակ սենյակներով, տնօրենի աշխատասենյակ, ժողովների դահլիճ:

Շինության ընդհանուր մակերեսը (արտաքին մակերեսով)՝ 4545.0 ք.մ: Մասնաշենք /Բ/-ի առավելագույն բարձրությունը հատակագծային նիշից 12.60 մ է: Մասնաշենքը եռահարկ է՝ մասամբ նկուղով:

Կոնստրուկտիվ սխեման կարկասային է, տանիքը հարթ՝ ջրահեռացումը կազմկերպված է, երեսապատվելու է՝ բազալտե սալիկներով, ալյումինե կոմպոզիտե սալիկներով, բարձրորակ սվաղով:

Ըստ ֆունկցիայի նկուղային, առաջին, երկրորդ և երրորդ հարկերը բաժանված են հետևյալ կերպ՝ նկուղային հարկում է գտնվելու տեխնիկական սենյակը:

Առաջին հարկում նախատեսվում են հյուրանոցային համարներ, աստիճանավանդակները և օժանդակ սենյակները:

Երկրորդ հարկում նախատեսված են ավտոկայանատեղիներ, ավտոլվացման կետ, խոհանոց, աստիճանավանդակներ և օժանդակ սենյակներ:

Երրորդ հարկում նախատեսված են հյուրանոցային համարներ, նախասրահ, աստիճանավանդակներ և օժանդակ սենյակներ:

Շինության ընդհանուր մակերեսը (արտաքին մակերեսով)՝ 2823.0 ք.մ.

Մասնաշենք /Գ/-ի առավելագույն բարձրությունը հատակագծային նիշից 12.60 մ է: Մասնաշենքը մեկ հարկանի է՝ մասամբ նկուղով:

Կոնստրուկտիվ սխեման կարկասային է, տանիքը մեծաթռիչք ֆերմաներով, ծածկը լանջավոր, մասամբ հարթ՝ ջրահեռացումը կազմակերպված, երեսպատվելու է՝ բազալտե սալիկներով, ալյումինե կոմպոզիտ սալիկներով, բարձրորակ սվաղով:

Ըստ ֆունկցիայի նկուղային եվ առաջին հարկերը բաժանված են հետևյալ կերպ՝ նկուղային հարկում է գտնվելու տեխնիկական սենյակը:

Առաջին հարկում նախատեսվում է մինիֆուտբոլի դահլիճ, հանդերձարաններ, բժշկի և մարզիչների սենյակներ և օժանդակ սենյակներ:

Մասնաշենք /Զ/-ի առավելագույն բարձրությունը հատակագծային նիշից 4.80 մ է: Մասնաշենքը մեկ հարկանի է՝ մասամբ նկուղով:

Կոնստրուկտիվ սխեման կարկասային է, տանիքը հարթ և լանջավոր՝ջրահեռացումը կազմակերպված, երեսապատվելու է՝ բազալտե սալիկներով, բարձրորակ սվաղով:

Ըստ ֆունկցիայի նկուղային եվ առաջին հարկերը բաժանված են հետևյալ կերպ՝ նկուղային հարկում են գտնվելու սանհանգույցները և տեխնիկական սենյակը:

Առաջին հարկում նախատեսվում են՝ ադմինիստրատիվ սենյակներ, սպասարկող անձնակազմի համար նախատեսված խոհանոցը և ճաշարանը, օժանդակ սենյակներ: Շինության ընդհանուր մակերեսը (արտաքին մակերեսով)՝ 225.0 ք.մ.

Նախատեսվում է կառուցել նաև բաց լողավազան 21x 50 մ. չափսերի և բաց մանկական լողավազան 8 x 9 չափսերի, որոնք ունեն տեխնիկական նկուղային հարկեր: Շինության տակ՝ 1424.0 ք.մ.

Շինության ընդհանուր մակերեսը (արտաքին մակերեսով)՝ 1424.0 ք.մ.

Տարածքում կատարվելու են՝ բարեկարգման աշխատանքներ, սալիկապատվելու է լողավազաններին կից հատվածներն ու հետիոտն ուղիները, կանաչապատվելու է տարածքը:

Նախատեսվող համալիրի կառուցման փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում

առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ազդեցությունը մեղմելու և նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- շինարարական օբյեկտը ծածկել համապատասխան բարձրություն ունեցող անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- շինանյութերը՝ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- հողկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել միայն հատկացված վայրեր:

Սպորտային համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է միանալով քաղաքային համանուն ցանցերին:

Շահագործման փուլում ազդեցությունը պայմանավորված է կաթսայատան աշխատանքով, որը կահավորված է երկու հատ 600 կվտ և մեկ հատ 1000 կվտ դրվածքային հզորությամբ կաթսաներով: Կաթսայատանը որպես վառելիք օգտագործվելու է բնական գազ: Կաթսայատունը շահագործվելու է ջեռուցման և տաք ջրամատակարարման նպատակով:

Նախատեսվող մարզահամալիրի ջրամատակարարումն նախատեսվում է իրականացնել կից փողոցով անցնող Մ150մմ ջրմուղի ցանցից:

Համաձայն տրված առաջադրանքի և տեխնիկական պայմանի նախատեսված է մարզահամալիրի կոյուղագիծը միացնել Մոլդովական 25 շենքի բակով անցնող Մ300մմ կոյուղատարին դիտահորում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2015թ օգոստոսի 5-ին և սեպտեմբերի 10-ին նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը: Երևանի քաղաքապետարանի բնապահպանական վարչությունը իր 05.08.2015թ 17/39646 և 11.09.2015 17/46287 գրություններով նույնպես հայտնել է իր դրական եզրակացությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Զորախաչ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գործող մարզահամալիրի լողավազանի վերակառուցում, նոր մասնաշենքերի կառուցում աշխատանքային նախագծերի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝ Ա. Մինասյան